ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Թեղենիք համայնք, ՀՀ
Կոտայքի մարզ, գ. Թեղենիք, 3փողոց,1շենք, Հեռ. 060-466492 ,
margarit.baghdasaryan@mail.ru

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 70
07 սեպտեմբեր 2015թ.

Հարգելի մարզպետ

Ի պատասխան Ձեր գրության, Ձեզ ենք ներկայացնում հաշվետվություն Կոտայքի մարզի Թեղենիք համայնքի 01.09.2014թ. - 01.09.2015թ. համայքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ:

Առդիր 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ - 01.09.2015թ համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ԹԵՂԵՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թեղենիք - 2015

Հարգելի Թեղենիքցիներ՝ 2014թվականի երկրորդ և 2015թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թվականի դեկտեմբերի 19-ին համայնքի ավագանին իր N35-Ն որոշմամբ ընդունել է 2014թվականի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել է 14,374,300 դրամ,ծախսերը 14,374,300 դրամ: Հողի հարկի չափը Թեղենիքի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 1միլ300հազար դրամ:

2014թվականի հողի հարկը հավաքագրվել է 1միլ 550 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100o/o-ը:

2014թ գույքահարկը հավաքագրվել է 100o/o-ով,որը բացարձակ թվով կազմել է 1միլ 550հազար դրամ:

2014թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 41-Ն որոշմամբ ընդունվել է 2015թվականի բյուջեն, ըստ որի եկամուտներն կազմել են 15միլ086հազար 500դրամ,ծախսերը՝ 15միլ 086հազար 500դրամ:

Հողի հարկը կազմել է 1միլ 300հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 703,0 դրամ, որը կազմում է տարեկան պլանի54,0 o/o-ը,

Գույքահարկերը կազմել են 1միլ550հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 810,0 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 52,0o/o-ը:

- ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետարանի օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 340,0 հազար դրամի օգնություն:

- ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Թեղենիքի միջնակարգ դպրոցի աշակերտներին տրվել է 50,0հազար դրամի նվերներ սեպտեմբերի 1-ի կապակցությամբ և 60,0 հազար դրամի վերջին զանգի կապակցությամբ :

- ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և գյուղատնտեսական նախարարության կողմից Թեղենիք համայնքում 2015թվականի գարնանը կատարվել է պայքար թրթուռների դեմ:

- ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում Թեղենիք համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյոկտների նկատմամբ; Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման մեկ թույլտվություն, որից գանձվել է համապատասխան տեղական տուրքի եռամսյակային գումարները:

- ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թվականի մարտի 23-ին և հուլիսի 27-ին Թեղենիք համայնքում կայացել են սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որի ընթացքում օտարվել են 0,35522հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Աճուրդների ընթացքում համայնքի բյուջե է մուտք եղել 204հազար 251դրամ: